

Բ Ա Ց Դ Ա Ս Ի Պ Լ Ա Ն

Դաս՝ համակարգչային տեխնիկայի կիրառմամբ

Ուսուցիչ՝
Ամսաթիվը՝

Առարկան՝ մաթեմատիկա

Դասարանը՝ 2-րդ

Դասի թեման՝ Երկնիչ թվերի գումարումն ու հանումը սյունակով (առանց կարգային անցման)

Դասի բնույթը՝ նոր նյութի հաղորդման դաս

Դասի նպատակը.

- ✦ Ամրապնդել երկնիչ թվերի գումարման և հանման վերաբերյալ արդեն ունեցած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:
- ✦ Ներկայացնել երկնիչ թվերը սյունակով գումարելու և հանելու հաշվեկանոնը (առանց կարգային անցման):
- ✦ Ձևավորել կիրառական պարզագույն խնդիրներ լուծելիս թվերն ու մեծություններն օգտագործելու կարողություններ և հմտություններ:
- ✦ Չարգացնել սովորողների տրամաբանական մտածողությունը, հաղորդակցական և համագործակցային կարողությունները:
- ✦ Խթանել սովորողների ինքնուրույն մտածողությունը:
- ✦ Մեծացնել հետաքրքրությունն առարկայի նկատմամբ:

Սովորողի ուսումնական ակնկալիքները.

Կիրառի երկնիչ թվերը սյունակով գումարելու և հանելու հաշվեկանոնը վարժություններ և խնդիրներ լուծելիս:

Դասի կահավորումը՝

- համակարգիչ, պրոյեկտոր և մեծ էկրան,
- քարտեր՝ առաջադրանքների կատարման համար և այլ անհրաժեշտ պարագաներ:

Դասի ընթացքը.

1. Բանավոր հաշիվ
2. Նոր նյութի հաղորդում
3. Խնդրի լուծում
4. Դասի ամփոփում և գնահատում
5. Տնային աշխատանքի հանձնարարում

Դ Ա Ս Ի Ը Ն Թ Ա Ց Ք Ի Ն Կ Ա Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը

Դասարանի սովորողները նախապես բաժանված են խմբերի. յուրաքանչյուր խումբը նստում է մեկ սեղանի շուրջը:

1. ԲԱՆԱՎՈՐ ՀԱՇԻՎ

Մտածողությունն ու հիշողությունը ակտիվացնելու, պատճառահետևանքային կապերը բացահայտելու նպատակով սովորողներին տալ հետևյալ հարցերը.

1. Ո՞ր թվերն են կոչվում երկնիչ թվեր:
2. Ի՞նչ կարգեր է պարունակում երկնիչ թիվը:
3. Ինչպե՞ս են կոչվում գումարման գործողության բաղադրիչները:
4. Ինչպե՞ս են կոչվում հանման գործողության բաղադրիչները:
5. Ո՞րն է ամենափոքր երկնիչ թիվը:
6. Ո՞րն է ամենամեծ երկնիչ թիվը:

2. ՆՈՐ ՆՅՈՒԹԻ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Նոր նյութի հաղորդումն ուղեկցվում է սլայդների ցուցադրումով:

2

Ցուցադրվում է երկնիշ թվերի գումարման (առանց կարգային անցման) կանոնը:

Ցուցադրվում է 34 և 25 թվերի գումարման գործողությունը այդ կանոնի կիրառմամբ:

Ցուցադրվում են երկնիշ թվերի գումարման վերաբերյալ առաջադրանքներ: Խմբերին բաժանվում են քարտեր, որոնց վրա գրված են այդ առաջադրանքները:

ՀԱԾՎԵ՛Ք ԳՈՒՄԱՐԸ.

26+42 16+43 25+34 44+33

Լուծման համար նրանց ժամանակ է տրվում: Այդ ընթացքում պետք է պարբերաբար մոտենալ խմբերին, հետևել առաջադրանքի կատարման ընթացքին: Այն խումբը, որն առաջինն է ավարտում աշխատանքը, ներկայացնում է իր ստացած պատասխանները: Այնուհետև Էկրանին ցուցադրվում են ճիշտ պատասխանները:

Ցուցադրվում է երկնիշ թվերի հանման (առանց կարգային անցման) կանոնը:

Ցուցադրվում է 74 և 23 թվերի հանման գործողությունը այդ կանոնի կիրառմամբ:

Ցուցադրվում են երկնիշ թվերի հանման վերաբերյալ առաջադրանքներ: Խմբերին բաժանվում են քարտեր, որոնց վրա գրված են այդ առաջադրանքները:

ՀԱԾՎԵ՛Ք ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ.

56-42 98-43 79-39 88-33

Այս անգամ ևս լուծման համար ժամանակ է տրվում: Այն խումբը, որն առաջինն է ավարտում աշխատանքը, ներկայացնում է իր ստացած պատասխանները: Այնուհետև դարձյալ Էկրանին բացվում են ճիշտ պատասխանները:

Ցուցադրվում է երկնիշ թվերը սյունակով գումարելու և հանելու կանոնը, ինչպես նաև 74 ու 23 թվերի գումարման և հանման գործողությունների կատարումը այդ կանոնի կիրառմամբ:

Ցուցադրվում են երկնիշ թվերի գումարման և հանման վերաբերյալ առաջադրանքներ, որոնք պետք է կատարվեն սյունակով գումարման և հանման հաշվեկանոնների կիրառմամբ: Խմբերին դարձյալ բաժանվում են քարտեր, որոնց վրա գրված են այդ առաջադրանքները:

ՀԱՇՎԵ՛Ք

37+42 54+25 64-41 88-68

3

Այս անգամ ևս լուծման համար տրվում է ժամանակ: Այն խումբը, որն առաջինն է ավարտում աշխատանքը, ներկայացնում է իր ստացած պատասխանները: Այնուհետև դարձյալ Էկրանին բացվում են ճիշտ պատասխանները:

3. ԽՆԴԻԻ ԼՈՒԾՈՒՄ

Ցուցադրվում է խնդիր, օրինակ՝ հաշվել եռանկյան պարագիծը:

Հաշվե՛ք պարագիծը:



Ցուցադրվում է խնդրի լուծումը:

4. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Կատարել անդրադարձ, ամփոփել դասը և անցնել գնահատմանը:

Գնահատելիս հաշվի առնել, թե ով ավելի արագ ընկալեց նոր նյութը, խմբային աշխատանքի ժամանակ օգնեց իր ընկերներին և սովորեցրեց նրանց, եղավ ավելի նախաձեռնող, ուղղորդեց խմբի գործունեությունն ու ցուցաբերեց ակտիվ մասնակցություն: Դասամատյանում գնահատել 5-6 աշակերտի:

5. ՏՆԱՅԻՆ ԱԾԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒՄ

ԴԱՍ 54. Կատարել № 312 բ, 313 բ, 314 բ, 315 ա առաջադրանքները:

Գրականություն.

4

1. Մկրտչյան Ս., Աբրահամյան Ա., Իսկանդարյան Ս. ՄԱԹԵՄԱՏԻԿԱ 2.- Եր.: Չանգակ-97, 2010:
2. Մկրտչյան Ս., Աբրահամյան Ա., Իսկանդարյան Ս. Մաթեմատիկա. ուսուցչի ձեռնարկ. 2-4-րդ դասարաններ.- Եր.: Չանգակ, 2013:
3. Սարգսյան Ս., Մանուկյան Մ., Աթոյան Լ. Միավորային գնահատումը 2-4-րդ դասարաններում. մաթեմատիկա.- Եր.: Արևիկ, 2009:
4. Մաթեմատիկա: Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր:

Այս դասի ցուցադրումն ու պլանը տեղադրված է համացանցում հետևյալ հասցեով` <http://lib.amedu.am/resource/2445> :

